

Կ-468-20.03.2014,20.02.2015-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵՉՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-40-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնելի հետևյալ նախադասությամբ.

«Սույն օրենքը չի կարգավորում «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «Ժա» կետով նախատեսված զոհերի հաշվառման եւ հուղարկավորության հետ կապված հարաբերությունները»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**հուղարկավորություն՝** մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ մահացածի աճյունասափորը հողին հանձնելու կամ աճյունասափորը հուշապատում տեղադրելու ծիսական արարողություն.».

2) 2-րդ պարբերությունում «և բնապահպանական» բառերը փոխարինել «, բնապահպանական և սանիտարական» բառերով.

3) 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**մասնակի փակ գերեզմանատուն՝** գերեզմանատուն, որտեղ սպառված են նոր գերեզմանների տրամադրման համար հողատարածքները և որտեղ նախկինում հատկացված գերեզմաններում կարող է իրականացվել վրահուղարկավորություն կամ նոր հուղարկավորություն՝ գերեզմանում ազատ տարածքի առկայության դեպքում».

4) 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**բաց գերեզմանատուն՝** գերեզմանատուն, որտեղ առկա են նոր գերեզմանների տրամադրման համար ազատ հողատարածքներ».

5) լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**մասնավոր գերեզմանատուն՝** քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխանող, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձանց կողմից սույն օրենքով սահմանված կարգով կազմավորված և շահագործվող գերեզմանատուն.».

գերեզմանատան կառավարիչ՝ համայնքային գերեզմանատների համար՝ համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը, կամ համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունը, պետական գերեզմանատների համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը, իսկ մասնավոր գերեզմանատների համար՝ գերեզմանատունը շահագործող անձ.

ընտանեկան գերեզման՝ սույն օրենքով սամանված չափով մեկ ընտանիքին հատկացվող գերեզմանատեղ»:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 3-րդ հոդվածը:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 4. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները

1. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) բնագավառի պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում վերահսկողության իրականացումը.

3) մասնավոր գերեզմանատան շահագործման համար թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու համար անհրաժեշտ պայմանների սահմանումը.

4) գերեզմանի տրամադրման և սպասարկման պայմանագրերի, վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվության, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանների տիպային ձևերի սահմանումը.

5) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 5-րդ հոդվածը:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 6. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները

1. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում համայնքի ղեկավարի իրավասություններն են՝

1) համայնքային գերեզմանատներ և դիակիզարաններ կազմավորելը, շահագործելը և պահպանելը՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան.

2) համայնքի վարչական տարածքում մահացած, հուղարկավորության կազմակերպման ստանձնողներ չունեցող քաղաքացիների հուղարկավորություն կամ դիակիզում կազմակերպելը.

3) գերեզմանատների տարածքների կառուցապատման նպատակով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման և համաձայնեցման փուլում քաղաքաշինական փաստաթղթերում շենքերին և շինություններին (համապատասխան մակերեսներով և քանակով) առաջադրվող պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելը.

4) գերեզմանատների կառուցապատման հատակագծեր (օգտագործման սխեմաներ) մշակելը և հաստատելը.

5) նոր գերեզմանատների կազմակերպման համար հողամասեր հատկացնելը, գոյություն ունեցող գերեզմանատների սահմանները փոփոխելը և գերեզմանատների փակման վերաբերյալ որոշումներ ընդունելը.

6) գերեզմանատների զբաղեցրած հողերի կառուցապատման սխեմաների մշակման, դրանց սահմանների փոփոխման, նոր գերեզմանատների կազմակերպման աշխատանքները համակարգելը.

7) հուղարկավորությունները, վրահուղարկավորությունները, վերահուղարկավորությունները կազմակերպելու, գերեզմանատների, դիակիզարանների շահագործման և հուղարկավորությունների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության, ինչպես նաև գերեզմանատների տարածքների կառուցապատման համար (շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ շինարարության իրականացման փուլում) քաղաքաշինական փաստաթղթերում շենքերին, շինություններին (համապատասխան մակերեսներով և քանակով) առաջադրվող պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը.

8) մասնավոր գերեզմանատների տարածքների կառուցապատման համար (շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ շինարարության իրականացման փուլում) քաղաքաշինական փաստաթղթերում շենքերին, շինություններին (համապատասխան մակերեսներով և քանակով) առաջադրվող պահանջների խախտման դեպքում դրանք ողջամիտ ժամկետում (չի կարող գերազանցել 12 ամիսը) վերացնելու համար կարգադրագիր տալը.

9) մասնավոր գերեզմանատան շահագործման համար տրված թույլտվության պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը.

10) սույն օրենքով սահմանված դեպքերում՝ մասնավոր գերեզմանատան կառավարիչ չլինելու պարագայում, մասնավոր գերեզմանատան կառավարիչ գործառույթներ իրականացնելը.

2. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Երևան քաղաքում տեղական

ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված այլ լիազորություններ»:

Հոդված 7. Օրենքի 7-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 8. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 3-րդ պարբերությունում «կարգի» բառը փոխարինել «կամքի» բառով.

2) 3-րդ մասը լրացնել 5-րդ պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հուղարկավորությունը կարող է կատարվել մասնավոր գերեզմանատանը մահացածի ցանկությամբ կամ նրա հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի ցանկությամբ»:

Հոդված 9. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հուղարկավորության իրականացման համար ներկայացվում է միայն քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների կողմից տրված մահվան վկայական».

2) 2-րդ մասի 3-րդ պարբերությունում «(բնօրինակի)» բառից հետո լրացնել «կամ գրանցամատյանում նախկինում կատարված գրանցումների» բառերը.

3) 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով տրամադրվում է՝ դիմողի ցանկությամբ մեկ գերեզմանատեղի համար 2.5 քառակուսի մետր հողատարածք (2.5x1.0 մետր չափերով), իսկ ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար՝ առավելագույնը 12,5 քառակուսի մետր հողատարածք:

Աճյունասափորը (մահացածի մարմնի դիակիզումից հետո) հողին հանձնելու դեպքում՝ համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով տրամադրվում է մեկ գերեզմանատեղի համար 1 քառակուսի մետր հողատարածք (1.0x1.0 մետր չափերով), կամ տեղադրվում է հուշապատի մեջ»:

4. Հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի ցանկությամբ անվճար հիմունքներով տրամադրվող գերեզմանատեղից բացի, համայնքային գերեզմանատանը կարող է վճարովի հիմունքներով տրամադրվել առավելագույնը 6 քառակուսի մետր հողատարածք՝ գերեզմանատան կառուցապատման սխեմայով համապատասխան տարածքներ նախատեսված լինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և վճարի դիմաց»:

4) լրացնել նոր 4.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1 Գերեզմաններում տապանաքարերի, հուշաքարերի, հուշարձանների, գերեզմանի սահմանային եզրաքարերի տեղադրման համար իրականացվող շինարարական աշխատանքների համար շինարարական թույլտվություն չի պահանջվում»:

5) 8-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

6) 9-րդ մասում «վարչակազմին» բառը փոխարինել «կառավարչին» բառով:

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Հուղարկավորությունների կազմակերպումն իրականացնող մարմինները

1. Գերեզմանատներում հուղարկավորությունների կազմակերպումը՝ գերեզմանների տրամադրումը, դրանց հաշվառումը, գերեզմանատների պահպանումն ու շահագործումն իրականացնում է՝

1) համայնքային գերեզմանատների դեպքում՝ համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը կամ կազմակերպությունը

2) պետական գերեզմանատների դեպքում՝ լիազորված պետական մարմինը.

3) մասնավոր գերեզմանատան դեպքում՝ գերեզմանատան կառավարիչը կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ անձի՝ վերջիններիս և գերեզմանատան շահագործողի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

2. Համայնքներում հուղարկավորության կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ստեղծվել ոչ առևտրային կազմակերպություններ»:

Հոդված 11. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «պետական» բառից հետո լրացնել «,մասնավոր» բառը:

2) 3-րդ մասում «Գերեզմանատների» բառը փոխարինել «Պետական և համայնքային գերեզմանատների» բառով:

3) 5-րդ մասում «հաշվին» բառից հետո լրացնել «բացառությամբ պետական և մասնավոր գերեզմանատների» բառերը:

4) լրացնել նոր 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Համայնքային և պետական գերեզմանատները օտարման կամ մասնավորեցման ենթակա չեն, բացառությամբ այն գերեզմանատների, որոնց նկատմամբ համայնքի կամ պետության սեփականության իրավունքը ծագել է սույն օրենքի 19.1-ին հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերով»:

Հոդված 12. Օրենքը լրացնել նոր 19.1-րդ և 19.2-րդ հոդվածներով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 19.1 Մասնավոր գերեզմանատների կազմակերպումը և դրանց գործունեությունը

1. Մասնավոր գերեզմանատները կազմակերպվում են սույն օրենքի 19-23-րդ հոդվածների դրույթների համաձայն՝ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ սեփականության կամ կառուցապատման իրավունքով իրենց տրամադրված նվազագույնը 3 հա տարածքով հողամասերում:

իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, սույն օրենքով նախատեսված պահանջների և պայմանների բավարարման դեպքում, մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար համայնքի ղեկավարի կողմից ստանում են թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասում մասնավոր գերեզմանատան շահագործումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե կառուցապատման պայմանագրով հստակ սահմանված է, որ հողամասի սեփականատերը հողամասը կառուցապատման է տրամադրել մասնավոր գերեզմանատուն կազմակերպելու նպատակով:

Մասնավոր գերեզմանատուն շահագործելու թույլտվության տրամադրումը կարող է մերժվել, եթե դիմողի կողմից չեն պահպանվել մասնավոր գերեզմանատների կազմակերպման և գործունեության համար անհրաժեշտ սույն օրենքով և լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջները և պայմանները: Թույլտվության տրամադրման համար գանձվում է տարեկան տեղական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափերով:

2. Մասնավոր գերեզմանատները կարող են կազմավորվել հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի վրա:

3. Մասնավոր գերեզմանատան կազմակերպումը հանդիսանում է քաղաքաշինական գործունեության տեսակ և ենթակա է օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

4. Մասնավոր գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պարտավոր է.

1) գերեզմանատան տարածքում ունենալ՝

ա. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման վայր՝ մինչև հոգեհանգստի և հուղարկավորության իրականացումը,

բ. առնվազն մեկ հոգեհանգստի սրահ՝ լիազոր մարմնի կողմից սահմանված չափով,

դ. ավտոկայանատեղ՝ լիազոր մարմնի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան,

ե. հուշապատ՝ աճյունասափորների տեղադրման համար,

զ. ծաղիկների, ծաղկեպսակների և հոգեհանգստի ու հուղարկավորության համար անհրաժեշտ այլ պարագաների վաճառքի սրահ,

է. դիակիզարան՝ կամ որևէ գործող դիակիզարանի օգտագործման կամ դրա ծառայություններից օգտվելու պայմանագիր.

ը. ոռոգման և խմելու ջրի համակարգ, հասարակական զուգարան.

2) առնվազն մեկ ավտոդիատար.

3) պարսպապատել գերեզմանատան տարածքը.

4) պահպանել բնապահպանական եւ սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները:

5. Մասնավոր գերեզմանատան դեպքում իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը գերեզմանատան տարածքում կարող է ունենալ հոգեհացի մատուցման սրահ:

6. Մասնավոր գերեզմանատան տարածքը օտարելու կամ կառուցապատման իրավունքի փոխանցման դեպքում նոր սեփականատիրոջը կամ կառուցապատման իրավունք ձեռքբերողին պետք է միաժամանակ փոխանցվեն նաև սույն օրենքի 19.2 հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերից ծագող իրավունքները և պարտավորությունները: Սույն մասի պահանջները չպահպանելու դեպքում պայմանագիրը առոչինչ է:

7. Գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի վերակազմակերպման կամ անհատ ձեռնարկատիրոջ մահվան դեպքում սույն օրենքի 19.2 հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերից ծագող իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են այն անձին, որին փոխանցվում է գերեզմանատան տարածքի նկատմամբ շահագործման իրավունքը:

8. Մասնավոր գերեզմանատաների տարածքը՝ դրա վրա առկա օժանդակ շինություններով, կարող է օտարվել միայն որպես մեկ գույքային միավոր:

9. Մասնավոր գերեզմանատան շահագործողը պարտավոր է գերեզմանատան անձնակազմի անդամներից նշանակել մեկ պատասխանատու անձ՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից մատուցվող բոլոր տեսակի ծառայությունների մատուցման վերաբերյալ հարցերը հուղարկավորության կազմակերպումն ստանձնող անձի հետ քննարկելու համար:

10. Ծառայությունները պատշաճ կազմակերպելու նպատակով մասնավոր գերեզմանատան շահագործողն իր ներքին իրավական ակտերով պետք է հաստատի անձնակազմի հազուստի, ինպես նաև անձնակազմի՝ հուղարկավորության, հոգեհանգստի և հոգեհացի մասնակիցների հետ վարվեցողության կանոններ:

Հոդված 19.2. Մասնավոր գերեզմանատներում հուղարկավորությունը

1. Մասնավոր գերեզմանատան շահագործողն ինքնուրույն է կազմակերպում հուղարկավորության ծառայությունների մատուցումը՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) հիման վրա:

2. Մասնավոր գերեզմանատներում գերեզմանատան շահագործողը պայմանագիր կարող է կնքել ինչպես մահացածի հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի հետ, այնպես էլ մահացածի հետ՝ վերջինիս կենդանության ժամանակ: Ընդ որում, գերեզմանատան սեփականատիրոջ և մահացածի միջև՝ վերջինիս կենդանության ժամանակ կնքված պայմանագրի առկայության դեպքում մահացածի փոխարեն պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջ կարող է ներկայացնել մահացած անձի իրավահաջորդը կամ վերջինիս շահերի օրինական ներկայացուցիչը:

3. Պայմանագիրը կնքվում է նվազագույնը 15 տարի ժամկետով: Նշված պայմանագրի հիման վրա գերեզմանատան շահագործողը պարտավորվում է

հատկացնել պայմանագրում ուղղակիորեն նշված տարածքը և հուղարկավորումը կատարելուց հետո պայմանագրում նշված ժամանակահատվածում պահպանել և սպասարկել գերեզմանը՝ ապահովելով գերեզմանի մաքրության, դրան հարակից տարածքների անվտանգության, պայմանագրում նախատեսված լինելու դեպքում կանաչապատման աշխատանքները:

4. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված պայմանագրին կցվում է հատակագիծ, որի վրա մատնանշվում է հուղարկավորման համար հատկացված տարածքը:

5. Մինչև սույն հոդվածի 1-ին մասում նշված պայմանագրի ժամկետի լրանալը մեկ տարվա ընթացքում գերեզմանատան շահագործողը պարտավոր է պահպանել գերեզմանը և միջոցներ ձեռնարկել պայմանագրի մյուս կողմին պայմանագրի ժամկետի ավարտի մասին սեղմ ժամկետում ծանուցելու համար: Սույն մասում նշված մեկամյա ժամկետում պայմանագրի մյուս կողմը կարող է գերեզմանատան սեփականատիրոջ հետ կնքել նոր պայմանագիր կամ իրականացնել վերահուղարկավորություն այլ գերեզմանատանը կամ իրականացնել դիակիզում:

6. Սույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան նոր պայմանագիր չկնքելու կամ վերահուղարկավորություն կամ դիակիզում չկատարելու և պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, գերեզմանատան շահագործողը կարող է կրկին օգտագործել գերեզմանի տարածքը՝ կատարելով վրահուղարկավորում կամ տարածքն օգտագործել մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանելուց հետո այն դիակիզելու, գերեզմանահորն անմիջապես ավտահանելու և աճյունասափորը հուշապատում անժամկետ տեղադրելու պայմանով:

7. Մասնավոր գերեզմանատան շահագործողը պարտավոր է վարել գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյաններ՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով, որոնք արխիվում պահվում են անժամկետ:

Հոդված 13. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) լրացնել 2.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Գերեզմանատների և դիակիզարանների կազմակերպման պարտադիր պայմանները սահմանում է լիազոր մարմինը: Գերեզմանատներին և դիակիզարաններին առաջադրվող սանիտարական և բնահպահպանական նորմերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինների կողմից».

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Պետական և համայնքային գերեզմանատներում գերեզմանները տրամադրվում են սահմանված կարգով հաստատված գերեզմանատան հատակագծով (օգտագործման սխեմայով) նախատեսված հերթականությամբ և սույն օրենքով սահմանված չափերով».

Հոդված 14 . Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 15. Օրենքը լրացնել 25.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 25.1 Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արա Բաբլոյան 06.03.2015 թվականի թիվ 012-6764 գրություն	Մասնավոր գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը գերեզմանատան տարածքում չի կարող ունենալ դիահերձարան, հետևաբար առաջարկվող օրենքի նախագծի 12-րդ հոդվածում առաջարկում ենք հանել 19.1 հոդվածի 5-րդ(ներկայիս 4-րդ) մասի 1-ին կետի դ. ենթակետը:	Ընդունվել է :	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, որով մասնավոր գերեզմանատան սեփականատիրոջ համար դիահերձարան ունենալու պահանջը հանվել է:

2	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան Մարգարյան</p>	<p>Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետում մասնավոր գերեզմանատան հասկացության մեջ «կազմակերպությանը» բառը փոխարինել «իրավաբանական անձանց» բառով:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
3	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան</p>	<p>Նախագծի 4-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակ տարանջատել պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները տեղական ինքնակառավարման մարմնի իրավասություններին՝ և իրենց բնույթով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունը վերապահել վերջիններին:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Մասնավորապես հստակ սահմանվել են պետական լիազոր մարմնի իրավասությունները Նախագծի 4-րդ հոդվածում և դրանք տարանջատվել են տեղական ինքնակառավարման մարմնի իրավասություններից:</p>

4	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան</p>	<p>Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում «Տեղական ինքնակառավարման մարմինների» բառերից հետո անհրաժեշտ է նշել «համայնքի ղեկավարի» բառերը:</p>	<p>Ընդունվել է մասնակի:</p>	<p>Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, սակայն, թվարկված կետերի վերլուծությունից բխում է, որ դրանք վերաբերում են համայնքի ղեկավարի իրավասություններին, ուստի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
5	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան</p>	<p>Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերը անհրաժեշտ է խմբագրել՝ ապահովելով իրավական որոշակիությունը:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Մասնավորապես 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերը շարադրվել են այլ խմբագրությամբ՝ բացառելով</p>

				տարըմբռնման հնարավորությունը:
6	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան Մարգարյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ապահովման» բառը փոխարինել «պահպանման» բառով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «որոշումների» բառը փոխարինել «որոշումներ» բառով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
8	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Գերեզմանատների զբաղեցրած հողերի կառուցապատման սխեմաների մշակման, դրանց սահմանների փոփոխման, նոր գերեզմանատների կազմակերպման աշխատանքները համակարգելը» Նույն մասի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Մասնավոր գերեզմանատան	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		կառավարման համար տրված թույլտվության պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացնելը.»		
9	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հուղարկավորությունը կարող է կատարվել մասնավոր գերեզմանատանը մահացածի ցանկությամբ կամ նրա հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի ցանկությամբ»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
10	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան Մարգարյան	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հուղարկավորության իրականացման համար ներկայացվում է միայն քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների կողմից տրված մահվան	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		վկայական».		
11	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	<p>Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Մասնավոր գերեզմանատների կազմակերպումը և դրանց գործունեությունը»:</p> <p>Նույն հոդվածի 1-ին մասում «տեղական ինքնակառավարման մարմնի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի (համայնքներում՝ համայնքի ղեկավարի կողմից» բառերով:</p> <p>Նույն հոդվածի 4-րդ մասում և 10-րդ մասում համապատասխանաբար «սեփականատիրոջ» և «կազմակերպության» բառերը փոխարինել «իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերով՝ հաշվի առնելով տերմինաբանական միասնականությունը ապահովելու խնդիրը, իսկ «դրամային» բառը «դրամական» բառով: Նույն</p>	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		<p>հողվածի 7-րդ մասի վերջին պարբերությունում «օտարման» բառը հանել, 8-րդ մասում հանել «լուծարման» բառը՝ հաշվի առնելով այն, որ լուծարման դեպքում իրավունքերը և պարտականությունները այլ անձի չեն անցնում, 10-րդ մասում «պարտավոր է» բառից հետո լրացնել «գերեզմանատան» բառերը:</p>		
12	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.2 հոդվածի 3-րդ մասում «համաձայն» բառը փոխարինել «հիման վրա» բառերով, իսկ 5-րդ մասում նախատեսել սեղմ ժամկետում ծանուցելու պահանջը: Նույն հոդվածի 6-րդ մասում «կանոնների» բառից հետո ավելացնել «և նորմերի» բառերը, իսկ 7-րդ մասում «տնօրինությունը» բառը փոխարինել «սեփականատերը» բառով:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
13	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արփինե Հովհաննիսյան</p>	<p>1. Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումից հստակ չէ, թե առավելագույնը 12 քառակուսի մետր հողատարածքը որքան գերեզմանատների համար է տրամադրվում (արդյոք տրամադրվում է 4, թե 5</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

	<p>12.03.2015 թվականի թիվ 12-7417 գրություն</p>	<p>գերեզմանատեղի համար), եթե 5, ապա առաջարկվում է <<12 քառակուսի մետր բառերը>> փոխարինել <<12,5 քառակուսի մետր>> բառերով:</p> <p>2. Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.1-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել՝ <<Կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասում մասնավոր գերեզմանատան կազմակերպումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե կառուցապատման պայմանագրով հստակ սահմանված է, որ հողամասի սեփականատերը հողամասը կառուցապատման է տրամադրել մասնավոր գերեզմանատուն կազմակերպելու նպատակով>>:</p> <p>3. 19.1-րդ հոդվածի 7-րդ մասում (ներկայիս՝ 6-րդ մաս) <<օտարելու>> բառից հետո լրացնել <<կառուցապատման իրավունքի փոխանցման>> բառերով: Քանի որ իրավունքները պետք է փոխանցվեն նաև այն դեպքում, երբ տեղի է ունեցել կառուցապատման</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
--	---	--	---------------------	--

	012-7854 գրություն	մակերեսով>> բառերը:		
15	ՀՀ Կառավարություն	<p>1. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետով առաջարկվող տարբերակի ընդունումը սպառնալիք է հանրային առողջությանը, քանի որ սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման 2-օրյա ժամկետից հրաժարվելը պարունակում է վարակիչ հիվանդությունների տարածման իրական վտանգ: Դիակիզման ժամկետ չնախատեսելու դեպքում սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգի աղբյուր հանդիսացող մարմինը (դի) կարող է պահվել անորոշ ժամկետով, որը բնակչության կյանքի և առողջության համար էական ռիսկեր պարունակող սանիտարահամաճարակային իրավիճակ կարող առաջացնել: Մինչդեռ մինչև 2-օրյա ժամկետի սահմանումը թույլ է վերացնել վտանգ աղբյուրը և կանխարգելել վարակիչ հիվանդություններ տարածումը:</p>	Ընդունվել է:	Նախագծում 2-օրա ժամկետը հանվել է:

	<p>2. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 42-րդ, 421 , 236-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշումը հայտնում եմ, որ անհրաժեշտ է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 156.1-րդ հոդվածի 1-ին մասից հանել «սանիտարական նորմերը» բառերը:</p> <p>Քանի որ սանիտարական և բնապահպանական նորմերի նկատմամբ վերահսկողության իրականացումը չի կարող վերապահվել տեղական ինքնակառավարման կամ տարածքային կառավարման մարմիններին:</p> <p>3.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծի 156.1-րդ հոդվածից հանվել են «բնապահպանական և սանիտարական նորմերը» բառերը:</p>
--	--	---------------------	--

		<p>օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «244-րդ հոդվածի» բառերը անհրաժեշտ է փոխարինել «244¹¹ հոդվածի» բառերով:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
16.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան</p>	<p><<Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծից հանվել է հասկացությունը: Արդեն իսկ ընդունված</p>

		<p>Հանրապետության օրենքի նախագիծ է ներկայացրել նաև Երևանի քաղաքապետարանը, որով սահմանվել է քաղաքացիական հոգեհանգստի հասկացությունը և դրա հետ կապված այլ նորմեր: Ուստի առաջարկվում է <<քաղաքացիական հոգեհանգիստ>> հասկացությունը հանել Նախագծի 2-րդ հոդվածից:</p>		<p><<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքով սահմանվել է <<քաղաքացիական հոգեհանգիստը>>:</p>
17.	<p><< Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան Մարգարյան</p>	<p>1. Նախագծով մասնավոր գերեզմանատան կառավարիչ չլինելու պարագայում, մասնավոր գերեզմանատան կառավարչի գործառույթներ իրականացնելը վերապահված է լիազոր մարմնին: Առաջարկվում է այդ լիազորությունը տալ համայնքի ղեկավարին:</p> <p>2. <<Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>></p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

		<p>«« օրենքի նախագծում պետք է հղում տալ ««Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին»» ՀՀ օրենքին, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ ««Տեղական ինքնակառավարման մասին»» ՀՀ օրենքով:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
18.	<p>«« Ազգային ժողովի պատգամավոր՝ Հովհաննես Մարգարյան</p>	<p>1. Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի 1-ին մասում հստակեցնել՝ թե իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ինչ իրավունքով են իրենց տրամադրված հողամասերում կազմակերպվում մասնավոր գերեզմանատները:</p> <p>2. Բացառել 15 տարուց հետո աճյունասափորը ոչնչացնելու կարգավորումը: Աճյունասափորը պետք է պահպանվի անժամկետ:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծով սահմանվել է, որ Մասնավոր գերեզմանատները կազմակերպվում են սեփականության կամ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերում:</p> <p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

19.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Թևան Պողոսյան</p>	<p>1.Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.2 հոդվածի 3-րդ մասում <<15 տարի>> բառերը փոխարինել <<100 տարի>> բառերով: 2.Նախագծից բացառել 15 տարուց հետո աճյունասափորը ոչնչացնելու կարգավորումը:</p>	<p>Չի ընդունվել է Ընդունվել է</p>	<p>Նշված կարգավորումը վերաբերում է գերեզմանատունը շահագործողի կողմից հուղարկավորության ծառայությունների մատուցման համար պայմանագիր կնքելու դեպքերին: Իսկ ծառայությունների մատուցման պայմանագիրը 100 տարի ժամկետով կնքելը ոչ միայն նպատակահարմար չէ, այլև կարող է հուղարկավորությունների կազմակերպման առումով որոշակի խնդիրներ առաջացնել:</p> <p>2. 15 տարուց հետո աճյունասափորը ոչնչացնելու կարգավորումը</p>
-----	--	---	--	--

				նախագծից հանվել է:
--	--	--	--	--------------------